ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ | 2021

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության մայիսից հունիս ամիսների անցուդարձի մասին:

UPSHIFT ՍՊԻՏԱԿ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ Եվրոպական միության աջակցությամբ Լոռու մարզի Սպիտակ համայնքում մեկնարկում է շատերին արդեն հայտնի «UPSHIFT» դեռահասների զարգացման և համայնքային նախաձեռնությունների խթանման ծրագիրը:

Մայիսի 19-ին տեղի ունեցավ UPSHIFT ՍՊԻՏԱԿ» դեռահասաների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանում ծրագրի շրջանակներում իրականացվող առաջին տեղեկատվական հանդիպումը:
Տեղեկատվական հանդիպման ընթացքում ծրագրի ղեկավար Արթուր Նաջարյանը Սպիտակ քաղաքի 3 դպրոցներում ներկայացրեց ծրագրի նպատակը, իրականացման փուլերը, պատանիների կողմից ծրագրային գաղափարների ներկայացման կարգն ու ձևաչափը:

Հունիսի 2-ին, 3-ին և 11-ին տեղի ունեցավ ՅՈՒՆԻՍԵՖ-ի «UPSHIFT Սպիտակ» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանում ծրագրի մենթորների վերապատրաստման դասընթացը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

Գյումրիում պաշտոնապես բացվեց «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոն: Գյումրու «Ընտանիքի անկյուն»-ը կծառայի որպես հարթակ երիտասարդ կանանց ու տղամարդկանց համար, որտեղ կանցկացվեն թեմատիկ հանդիպումներ, դասընթացներ և միջոցառումներ՝ ուղղված կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի փոփոխմանը, երեխայի խնամքի ու ծնողավարման մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացմանը

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Գյումրիում գործող «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոնում հունիսի 19-ին մեկնարկեց «Հայրիկների դպրոց» թեմատիկ հանդիպում-քննարկումների շարքը: Առաջին հանդիպման թեման էր «Հոր ազդեցությունը», որի նպատակն էր ներկայացնել հոր կամ հեղինակություն վայելող որևէ այլ տղամարդու ունեցած ազդեցությունը մասնակիցների վրա՝ վերջիններիս հասունացման շրջանում:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔ



Մայիսի 25-28-ը Ուկրաինայի Սումի քաղաքում տեղի ունեցավ «Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացում երիտասարդների դերի բարձրացում» խորագրով երկարաժամկետ Էրազմուս+ ծրագրի միջանկյալ գնահատման հանդիպումը: Վերջինիս մասնակցում էին 11 ներկայացուցիչներ Հայաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Խորվաթիայից և Չեխիայից՝ ծրագրի միջնաժամկետ արդյունքները գնահատելու և հետագա գործողությունները մշակելու նպատակով:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Career Orientation Aimed at Community Happiness

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն (Հայաստան) «The Globe» (Չեխիա), «Associazione Culturale Strauss» (Իտալիա), «Coobra – cooperativa bracianti» (Ավստրիա) and «MITTETULUNDUSUHING NOORED UHISKONNA HEAKS» (Էստոնիա) կազմակերպությունների հետ համատեղ Էրազմուս+ ծրագրի «Համագործակցություն նորարարության և լավագույն փորձի փոխանակման համար՝ Ռազմավարական գործընկերություն երիտասարդության ոլորտում» Գործողություն 2 ծրագրի շրջանակներում իրականացնում է «Career Orientation Aimed at Community Happiness» (C.O.A.C.H.) երկարաժամկետ համագործակցային ծրագիրը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԱՐՇԱՎ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Մայիսի 30-ին տեղի ունեցավ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած հերթական ճանաչողական արշավը: ԵՆԿ արշավականները իրենց ճանաչողական այցը սկսեցին Կուրթան համայնքի Գնեվանք խոնարհված եկեղեցուց, որին հաջորդեց Արևածագի արևռտ ձորը իր անկրկնելի գեղեցկությամբ և Հնեվանքը իր դարավոր զորությամբ:

ԿՍՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ

«Գյումրու երիտասարդների տանը» հագեցած է անցնում երիտասարդների առօրյան՝ հնարավորություն տալով երիտասարդներին մասնակցել տարբեր կրթական, ուսուցողական ակումբներին, հանդիպում-քննարկումներին:

«Կյանքի հիմնարար հմտություններ դեռահասների համար» ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի երեք խմբերի մասնակիցները, որոնց թվում էին կենտրոնի սաներից շատերը, մայիսի 4-ին հանդիպում ունեցան Գյումրի համայնքի ղեկավար Սամվել Բալասանյանի հետ, իսկ մայիսի 11-ին՝ Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանի հետ: Հանդիպումների ընթացքում դեռահասները ներկայացրեցին Շիրակի մարզում իրականացրած իրենց համայնքային

նախաձեռնությունները և կիսվեցին իրենց ձեռքբերած հմտությունների և գիտելիքների մասին:

Կենտրոնի սաները մասնակցեցին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպած ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2021-2025թթ. ռազմավարության նախագծի վերաբերյալ քննարկմանը:

«Գյումրու երիտասարդների տան» թիմը և սաները կազմակերպեցին հանդիպում պարտադիր զինվորական ծառայության մեկնող մեր երկու սաների համար: Հանդիպման ժամանակ ցուցադրվեց մեր երկու նորակոչիկ սաների կենտրոնում անցկացրած լուսավոր ու հիշարժան պահերի մասին պատմող տեսանյութ, որը ևս մեկ անգամ ջերմ ու հարազատ միջավայր ստեղծեց: Որպես կենտրոնի շրջանավարտներ հանձնվեցին հավաստագրեր:

ՀԵՏԵՎԵԼ ԷՋԻՆ